

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2025թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի բյուջեի «Տրանսպորտային համակարգի արդիականացում» ծրագրով 2020 թվականին ձեռք բերված 1,825,000,000.0 (մեկ միլիարդ ութ հարյուր քսանհինգ միլիոն դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 100 հատ ԳԱՀ A68R52 մականիշի ավտոբուսները, 2021 թվականին ձեռք բերված 7,199,920,000.0 (յոթ միլիարդ մեկ հարյուր ինսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 161 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մականիշի ավտոբուսները և 2021 թվականին ձեռք բերված 2,236,000,000.0 (երկու միլիարդ երկու հարյուր երեսունվեց միլիոն դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 50 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մականիշի ավտոբուսները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար 2020 և 2021 թվականների ընթացքում ներկրված թվով 100 հատ ԳԱԶ A68R52, թվով 161 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN և թվով 50 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշների ավտոբուսների շահագործումը հանձնվել է «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույքի նվիրատվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ